ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշսթի 1

№ 4536-Ա « 06 » նոյեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՄԱՍՍԱՉՈՒՍԵԹՍ ՆԱՀԱՆԳԻ ՔԵՄԲՐԻՋ ԵՎ ՆՅՈՒ ՅՈՐՔ ՆԱՀԱՆԳԻ ՆՅՈՒ ՅՈՐՔ ՔԱՂԱՔՆԵՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Քեմբրիջ–Երևան քույր քաղաքների ասոցիացիայի գանձապահ Նիկոլ Ատեսյան Սիմոնսի հրավերը՝ Քեմբրիջի քաղաքապետարանի, մարդկային ծառայությունների և կանանց կարգավիճակի հանձնաժողովի գործընկերների հետ հանդիպումներին մասնակցելու նպատակով, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Ղարիբյանի 24.10.2025 թվականի №Ն/63311-25 զեկուցագիրը՝ Նյու Յորքի Ֆորդհամի համալսարանի հետ սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրման առանձնահատկությունների վերաբերյալ փորձի փոխանակման հանդիպումներ կազմակերպելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Ղարիբյանին՝ 2025 թվականի նոյեմբերի 7-ից 13-ը ներառյալ գործուղել Ամերիկայի Միացյալ Նահանգների Մասսաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաք, իսկ 2025 թվականի նոյեմբերի 14-ից 16-ը ներառյալ գործուղել Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու Յորք նահանգի Նյու Յորք քաղաք:

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվելու են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին՝ բացառությամբ ավիատոմսի, որը հոգում է հրավիրող կողմը:

3.Ընդունել ի գիտություն, որ ելնելով հրավիրող կողմի գնած ավիատոմսի չվացուցակից՝ վերադարձի ճանապարհին նախատեսվում է հարկադրական կանգառ Վաշինգտոն քաղաքում՝ նոյեմբերի 17-18-ը:

4.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ

Ղարիբյանի բացակայության ընթացքում երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Վահե Գրիգորյանին:

5.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246